ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ БОГОСЛОВИЯ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF THEOLOGY

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԱ

ЕЖЕГОДНИК

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ТОМ XI

YEARBOOK

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

VOLUME XI

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
ЕРЕВАН - 2016

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2016

YSU PRESS
YEREVAN - 2016

ԽՈՐՀՐԴԱ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԵՐԱԶՄԻՆ ՀԱՅԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վոլոդյա Գասպարյան

Խորհրդա-ճապոնական պատերազմը, որը տեղի է ունեցել 1945 թ. օգոստոսի 9-ից սեպտեմբերի 2-ը, Երկրորդ համաշխարհային պատերազմի եզրափակիչ փուլն է: Որպեսզի ընթերցողը հստակ պատկերացում կազմի այդ պատերազմի մասին, նպատակահարմար ենք գտնում պատմական համառոտ ակնարկ տալ մինչ այդ տեղի ունեցած պատմական իրադարձությունների վերաբերյալ: Դեռևս 1937 թ. ամռանը ճապոնական զորքերը, ներխուժելով Չինաստանի հյուսիսային և կենտրոնական շրջաններ, գրավեցին լայնածավալ տարածքներ, իսկ Մանջուրիայում ստեղծեցին իրենց կամակատար իշխանությունը: 1938 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Չինաստանի և Կորեայի հետ Խորհրդային Միության սահմանների մոտ՝ Խասան լճի շրջանում, իսկ 1939 թ. հուլիս-սեպտեմբերին Խալխին-Գոլ գետի շրջանում (Մոնղոլիայի Ժողովրդական Հանրապետություն) ճապոնացիները զինված սադրանքներ կազմակերպեցին Խորհրդային Միության դեմ, սակայն ջախջախիչ պարտություն կրեցին: Դա ստիպեց Ճապոնիային 1941 թ. ապրիլի 13-ին ԽՍՀՄ-ի և նրա դաշնակից Մոնղոլիայի Ժողովրդական Հանրապետության հետ պայմանագիր կնքել չեզոքության վերաբերյալ: Սակայն Հայրենական մեծ պատերազմի տարիներին Ճապոնիայի ռազմածովային նավատորմի ուժերը բազմիցս խախտեցին այդ պայմանագիրը և խաղաղօվկիանոսյան ռազմական գործողությունների թատերաբեմում ոչ միայն սադրիչ հարվածներ հասցրին խորհրդային առևտրական նավերին, այլև պատերազմ մղելով ԽՍՀՄ դաշնակից երկրների դեմ՝ ծանր կորուստներ պատճառեցին նրանց: Բացի այդ ԽՍՀՄ Հեռավորարևելյան սահմանների մոտ կենտրոնացնելով իր միլիոնանոց Կվանտունյան բանակը՝ ֆաշիստական Գերմանիայի դաշնակից Ճապոնիան Հեռավոր արևելքում ստիպել էր Խորհրդային Միությանը զգալի թվով զորքեր պահել այդտեղ, որոնք խիստ անհրաժեշտ էին Խորհրդա-գերմանական ճակատում: 1945 թ. փետրվարի 4-ից 11-ը Ղրիմում՝ Յալթայում, տեղի ունեցավ ԽՍՀՄ-ի,

ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի դաշնակից պետությունների ղեկավարների կոնֆերանսը, որտեղ ԽՍՀՄ-ը համաձայնել էր, որ ֆաշիստական Գերմանիայի ջախջախումից 2-3 ամիս անց պատերազմի մեջ կմտնի Ճապոնիայի դեմ և կօգնի դաշնակիցներին ջախջախելու նրան: Հայրենական մեծ պատերազմի ավարտից (9 մայիսի 1945 թ.) մեկ ու կես ամիս անց (1945 թ. հուլիսի 17- օգոստոսի 2-ը) Գերմանիայի Պոտսդամ քաղաքում տեղի ունեցած կոնֆերանսի ընթացքում ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Չինաստանի ղեկավարները դիմեցին Ճապոնիայի կառավարությանը անհապաղ անձնատուր լինելու հռչակագրով: Սակայն Ճապոնիայի կառավարությունը մերժեց այն: 1945 թ. օգոստոսի 8-ին ԽՍՀՄ-ը, հավատարիմ իր դաշնակցային պարտականություններին, միացավ Պոտսդամի հռչակագրին և մեկ օր անց՝ օգոստոսի 9-ին պատերազմ հայտարարեց Ճապոնիային[1]:

Նույն օրը Կարմիր բանակի՝ Անդրբայկալյան, 1-ին և 2-րդ հեռավորարևելյան ռազմաճակատի զորքերը՝ Խաղաղօվկիանոսյան ռազմական նավատորմի և Ամուրյան գետային նավատորմի աջակցությամբ, մարտական գործողություններ սկսեցին ԽՍՀՄ հեռավորարևելյան սահմանների մոտ կենտրոնացված ճապոնական մեկ միլիոնանոց Կվանտունյան բանակի դեմ: Սրընթաց հարձակման հետևանքով խորհրդային զորքերը ճապոնական զավթիչներից ազատագրեցին Հյուսիսարևելյան Չինաստանի, Հյուսիսային Կորեայի տարածքները, Հարավային Սախալինը, որը Ճապոնիան ցարական Ռուսաստանից զավթել էր դեռևս 1904-1905 թթ. Ռուս-ճապոնական պատերազմի ժամանակ և Կուրիլյան կղզիները: 1945 թ. սեպտեմբերի 2-ին մարտնչող կողմերը ամերիկյան «Միսսուրի» գծանավի տախտակամածի վրա ստորագրեցին Ճապոնիայի անվերապահ կապիտուլյացիայի մասին ակտը, որով ավարտվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը, որը սկսվել էր 1939 թ. սեպտեմբերի 1-ին՝ ֆաշիստական Գերմանիայի կողմից Լեհաստանի վրա հարձակումով: Այդ պատերազմում Կարմիր բանակի Անդրբայկալյան ռազմաճակատի անվերադարձ կորուստները կազմեցին 2228 մարդ, իսկ սանիտարական կորուստները՝ 8383 մարդ, 1-ին հեռավորարևելյան ռազմաճակատի անվերադարձ կորուստները՝ 6324 մարդ, իսկ սանիտարական կորուստնե-

---

[1] Великая Отечественная война 1941-1945, книга 3, Освобождение, М.: Изд. Наука; 1999, с. 394.

ը՝ 21069 մարդ, 2-րդ հեռավորարևելյան ռազմաճակատի անվերադարձ կորուստները՝ 2449 մարդ, սանիտարական կորուստները՝ 5583 մարդ[1], Խաղաղօվկիանոսյան ռազմական նավատորմի անվերադարձ կորուստները կազմեցին 998 մարդ, իսկ սանիտարական կորուստները՝ 1298 մարդ, Ամուրյան ռազմական նավատորմի կորուստները կազմեցին՝ 32 մարդ, սանիտարական կորուստները՝ 123 մարդ[2]: Այսպիսով, Խորհրդա-ճապոնական պատերազմում խորհրդային զինված ուժերի ընդհանուր կորուստները կազմեցին 48487 մարդ, որից անվերադարձը՝ 12031, իսկ սանիտարականը՝ 36456 մարդ[3]:

Խորհրդա-ճապոնական պատերազմում կատարած սխրանքների և ցուցաբերած խիզախության համար Կարմիր բանակի և նավատորմի ավելի քան 308000 զինվորներ, սպաներ ու գեներալներ պարգևատրվեցին մարտական շքանշաններով ու մեդալներով, իսկ 67 հոգու շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: Մարտական առաջադրանքներն օրինակելի կատարելու համար Կարմիր բանակի բազմաթիվ միավորումների ու զորամասերի շնորհվեց՝ Խինգանյան, Ամուրյան, Ուսսուրիյսկյան, Խարբինյան, Մուկդենյան, Սախալինյան և Կուրիլյան պատվավոր անվանումներ[4]: Ի պատիվ այդ հաղթանակի՝ 1945 թ. սեպտեմբերի 30-ին հիմնադրվեց «Ճապոնիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալ, որով պարգևատրվեց ավելի քան 1800000 մարդ:[5] Նրանց մեջ քիչ թվով չէին կազմում հայ ժողովրդի զավակները, որոնց մի զգալի մասը մինչ այդ ակտիվ մասնակցություն էր ունեցել Հայրենական մեծ պատերազմին և իր արժանի ավանդը ներդրել ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում: Այս առումով էլ ինչպես Խորհրդային Միության, այնպես էլ նրա փլուզումից հետո ստեղծված Անկախ պետությունների համագործակցման երկրների, հատկապես Ռուսաստանի պատմաբանները պատշաճ ուշադրություն դարձրին Խորհրդա-ճապոնական պատերազմի պատմու-

---

[1] Гриф секретности снят. Потери вооруженных сил СССР в войнах, боевых действиях и военных конфликтах, М.: Воениздат, 1993, с. 281-283.

[2] Նույն տեղում, էջ 303, 305:

[3] Այս հաշվարկները հայ պատմագրության մեջ կատարվում են առաջին անգամ մեր կողմից:

[4] Советская военная энциклопедия, Т. 7, М.: Воениздат, 1974, с. 422.

[5] Ордена и медали СССР, М.: Воениздат, 1974, с. 167.

թյան հիմնահարցի լուսաբանմանը՝ հրատարակելով մի շարք աշխատություններ[1]:

Խորհրդահայ պատմագրության մեջ առանձին աշխատություններ չեն նվիրվել Խորհրդա-ճապոնական պատերազմին, մասնավորապես այդ պատերազմին հայերի մասնակցությանը: Չնայած դրան հայ պատմաբանները Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցին նվիրված մի շարք աշխատություններում համառոտակի լուսաբանել են այդ հիմնահարցը: Հայ պատմաբաններից առաջինը այդ հարցին անդրադարձել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Նավասարդի Մնացականյանը[2]: Նա իր մենագրության 9-րդ գլխի 6-րդ ենթագլխում, որը վերնագրված է «Սովետական բանակի մղած մարտերը ճապոնական զավթիչների դեմ և հայ ռազմիկների մասնակցությունը այդ մարտերին»: 12 էջից բաղկացած ենթաբաժնում հեղինակը անդրադառնում է Խորհրդա-ճապոնական պատերազմի նախապատմությանը, ապա համառոտակի նկարագրելով 1945թ. օգոստոսի 9-ից սեպտեմբերի 2-ը տեղի ունեցած մարտական գործողությունները՝ ցույց տալիս այդ մարտերին մասնակցած և իրենց խիզախությամբ աչքի ընկած հայորդիների սխրանքները: Մասնավորապես, նա խոսում է գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանի, գեներալ-լեյ-

---

[1] **В. Багров**. Южная-Сахалинская и Куральская операции (август 1945 года), М.: Воениздат, 1959; История Великой Отечественной войны Советского Союза 1941-1945. Т. 5. Победоносное окончание войны с фашистической Германией. Поражение империалистической Японии (1945 г.). М.: Воениздат, 1963; А. Дубинский, Освободительная миссия Советского Союза на Дальнем Востоке. М.: Воениздат, 1966; Авторский коллектив. Краснознаменный Дальневосточный. История Краснознаменного Дальневосточного военного округа. М.: Воениздат, 1971; Л. Внотченко. Победа на Дальнем Востоке. Военно-исторический очерк о боевых действиях советский войск в августе-сентябре 1945г. М.: Воениздат, 1971; К. Мерецков. На службу Родины. Страницы воспоминаний. М.: Воениздат, 1971; С. Захаров и другие. Краснознаменной Тихоокеанский флот. М.: Воениздат, 1973; История Второй мировой войны 1939-1945. Т. 11. Поражение империалистической Японии. Окончание второй мировой войны. М.: Воениздат, 1980; А. Василевский. Дело всей жизни. М.: Воениздат, 1984, 5-е изд. А. Б. Широкорад. Русско-японские война 1904-1945. Минск, изд. Харвест, 2003; Черевко К. Е., Кириченко А. А., Советско-японская война (9 августа- 2 сентября 1945 г.). Рассекречение архива (предистория IX09, последствия), М.: изд. МППА «БИМПА», 2006 и т.д.

[2] **Ա. Ն. Մնացականյան**, Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում (1941-1945), Եր., Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1945:

տենանտ Բարսեղովի, հրետանու սպա Արամ Մկրտչյանի, Սերյոժա Էյլարյանի, Տրդատ Պողոսի Խրաշյանի, Զավեն Հովհաննիսյանի և գնդապետ Միտոյանի մասին: Հիշատակվում են նաև գնդապետներ Օգանեզովի, Հայրապետյանի և Հարությունյանի միայն ազգանունները, ուրիշ ոչինչ[1]: Նույնիսկ չի նշված Բարսեղովի անուն հայրանունը – Պարսեղով Միքայել Արտեմի, Խորհրդային Միության հերոսի բարձր կոչմանը նա արժանացել է Խորհրդա-ֆիննական պատերազմում կատարած սըխրանքների համար՝ 1940թ. մարտի 21-ին: Սակայն Ա. Ն. Մնացականյանը հետագայում հրատարակած «Միասնական շարքերում» գրքում[2], որտեղ Խորհրդա-ճապոնական պատերազմին հայերի մասնակցությանը հատկացրել է ընդամենը 4 էջ, նշում է, որ Խորհրդային Միության հերոս Միքայել Պարսեղովը եղել է 2-րդ հեռավորարևելյան ռազմաճակատի հրետանու հրամանատար, որ Խորհրդային Միության հերոս գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը 215-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարն էր, իսկ գնդապետ Բագրատ Միտոյանը՝ 72-րդ ծովային բրիգադի հրամանատարը: Հեղինակը հիշատակում է նաև 12-րդ օդային բանակի հրամանատար, ավիացիայի մարշալ Խուդյակով-Խանփերյանցի ազգանունը՝ առանց նշելու նրա անուն-հայրանունը[3]: 1970 թ. Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատարակչությունը լույս ընծայեց ՀՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտի կողմից կազմված «Հայ ժողովրդի պատմություն» 8-հատորյակի 7-րդ հատորը, որի 1-ին բաժինը (էջ 15-208) նվիրված էր Հայրենական մեծ պատերազմի պատմությանը: Առաջին բաժնի երրորդ գլխում, որը վերնագրված է «Սովետական Հայաստանը Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտի շրջանում» (հեղինակ՝ Ե. Մ. Խալեյան), Խորհրդա-ճապոնական պատերազմին հատկացվել է ընդամենը 25 տող, որտեղ ընդհանուր խոսքերով թվարկվում են ավիացիայի մարշալ Ա. Խուդյակովի (Ա. Խանփերյանցի), գեներալներ Մ. Պարսեղովի, Հ. Թումանյանի, Ա. Ղազարյանի, Գ. Չայլախյանի, գնդապետներ Սուպյանի, Հայրապետովի,

---

[1] Նշված աշխատությունը, էջ 407-412:

[2] **Ա. Ն. Մնացականյան**, Միասնական շարքերում, Եր., «Հայաստան» հրատ., 1975, էջ 439-443:

[3] Նշված աշխատությունը, էջ 443:

Հարությունյանի, փոխգնդապետ Օգանեզովի, մայոր Գալստյանի ազգանուններն ու ուրիշ ոչինչ[1]:

Հայաստանի Հանրապետության պատմաբաններից առաջինը, ով չնայած համառոտ, բայց ամփոփիչ խոսք ասաց հիմնահարցի վերաբերյալ, պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Ամասիայի Հարությունյանն է: Նա 2002 թ. հրատարակեց «Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945 թթ.)» մենագրությունը, որի 4-րդ գլխի 2-րդ բաժինը նվիրված էր Խորհրդա-ճապոնական պատերազմին հայերի մասնակցությանը[2]: Ի տարբերություն նախորդ հեղինակների, Կ. Ա. Հարությունյանը հիմնահարցին անդրադառնալիս առաջին անգամ օգտագործել է Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվի նյութերը, շրջանառության մեջ դրել նոր փաստեր և անուններ: Հեղինակը առաջին անգամ հավաստի տվյալների հիման վրա տվել է, թե մարտերում աչքի ընկած հայ սպաներն ու զինվորները ինչ պարգևների են արժանացել, բերել ճշտված թվեր, նոր անուններ: Սակայն Կ. Ա. Հարությունյանը 8-9 էջում չէր կարող և նպատակ էլ չուներ տալու Խորհրդա-ճապոնական պատերազմին հայերի մասնակցության ամբողջական պատմությունը:

Հայ պատմագրության մեջ առաջին անգամ գիտական հատուկ ուսումնասիրություն է կատարել Լուսինե Սերյոժայի Կոստանդյանը, որը 2002 թ. հունիսի 21-ին թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում՝ «Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Խորհրդա-ճապոնական պատերազմին (9.8-2.9 1945 թ.)» թեմայով: 146 էջից բաղկացած աշխատության մեջ, որը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրափակումից, մանրամասն կերպով պարզաբանվում են պատերազմի բնույթն ու պատճառները, տրվում է մարտական գործողությունների ընդհանուր պատկերը, նշվում տարած հաղթանակի նշանակությունը: Երկրորդ գլխում հեղինակը հավաստի արխիվային փաստերի հիման վրա լուսաբանում է Անդրբայկալյան ռազմաճակատի կազմում հայորդիների կատարած սխրանքները: Այստեղ վեր են հանվում 12-րդ օդային բանակի հրամանատար, ավիացիայի

---

[1] Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 145-146:

[2] **Կ. Ա. Հարությունյան**, Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին, Եր., «Զանգակ-97» հրատ., 2002, էջ 109-116:

մարշալ Սերգեյ Խուդյակով-Արմենակ Խանփերյանցի օպերատիվ-մարտավարական բարձր գիտելիքները: Նրա գլխավորությամբ բանակն իրականացրեց ավելի քան 5000 ինքնաթիռային թռիչք, 4000 տոննա բեռ հասցրեց 6-րդ գվարդիական տանկային բանակին, օդային դեսանտներ իջեցրեց չինական Չանչուն, Մուկդեն, Տունլյաո, Լյաոյուն քաղաքերում, ինչպես նաև Դալնի և Պորտ Արթուր նավահանգիստ ամրոցներում:

Խինգան-Մուկդենյան մարտական գործողության ընթացքում 12-րդ օդային բանակի հմուտ ղեկավարման և այդ ընթացքում օպերատիվ ռազմավարական բարձր ունակություններ դրսևորելու համար ավիացիայի մարշալ Արմենակ Խանփերյանցը պարգևատրվեց Սուվորովի 1-ին աստիճանի զորավարական շքանշանով: Մարտերում ցուցաբերած խիզախության համար կառավարական զանազան պարգևների արժանացան օդաչուներ՝ փոխգնդապետ Խաչատուր Պետրոսյանցը, կապիտան Լևոն Սարգսյանը, կրտսեր լեյտենանտներ՝ Սուրեն Բաղդասարյանը, Արշակ Փեշքերյանը, Նիկոլայ Արզումանյանը և ուրիշներ[1]: Երկրորդ գլխում լուսաբանվում են նաև 6-րդ գվարդիական տանկային բանակի շարքերում ավելի քան 1000 հայորդիների սխրանքները, մասնավորապես բացահայտվում է բանակի ռազմական խորհրդի անդամ, տանկային զորքերի գեներալ-լեյտենանտ Հայկ Թումանյանի դերը Մեծ Խինգանի լեռաշղթան և Մանջուրական հարթավայրի հաղթահարման մարտերում տարած հաղթանակում, որի համար նա պարգևատրվեց Լենինի շքանշանով[2]: Լուսինե Կոստանդյանը հայ պատմագրության մեջ առաջին անգամ հիշատակում է մոտոմեքենայացված գումարտակների հրամանատարներ, մայորներ Սերգեյ Մկրտչյանի, Զավեն Բաղդասարյանի, Ներսես Հակոբյանի, Մամիկոն Առուստամյանի անունները, որոնք վերոհիշյալ մարտերում ցուցաբերած քաջության համար պարգևատրվեցին Ալեքսանդր Նևսկու շքանշանով: Այս բաժնում լուսաբանվում է նաև 276-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գնդապետ (հետագայում գեներալ-մայոր) Կոստանդին Լազարևի միավորման դերը Մեծ Խինգանի լեռ-

---

[1] **Լ. Ս. Կոստանդյան**, Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Խորհրդա-ճապոնական պատերազմին (9.8-2.9, 1945 թ.), պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2002, էջ 15:

[2] Նշված աշխ., էջ 16:

նաշղթան բարդ պայմաններում հաղթահարելու գործում, ինչի համար դիվիզիային շնորվեց «Խինգանյան» պատվավոր անվանումը:

Երրորդ գլխում հեղինակը լուսաբանում է Երկրորդ հեռավորարևելյան ռազմաճակատի կազմում՝ Սունգուրյան, Ցիցիկարյան և Ժաոխեյան ուղղություններով լեռնա-անտառոտ, ճահճոտ, բնակլիմայական բարդ պայմաններում իրագործված մարտական գործողությունների ժամանակ հայ հրամանատարների, քաղաշխատողների ու զինվորների խիզախությունն ու սխրանքները: Այս ռազմաճակատի հրետանու հրամանատարն էր Խորհրդա-ֆիննական և Հայրենական մեծ պատերազմներում աչքի ընկած, Խորհրդային Միության հերոս Միքայել Պարսեղովը, որի զորավարական տաղանդը գնահատվեց Սուվորովի 2-րդ և Կուտուզովի 1-ին աստիճանի շքանշաններով[1]: Այս բաժնում վեր են հանվել ռազմաճակատի բժշկասանիտարական վարչության պետ, բժշկական ծառայության գեներալ-լեյտենանտ Ավետիք Բուռնազյանի, կորպուսի հրետանու հրամանատար, գնդապետ (հետագայում գեներալ-մայոր) Գրիգոր Ասատուրովի, դիվիզիայի հրամանատար, փոխգնդապետ (հետագայում գեներալ-մայոր) Առաքել Օգանեզովի, բրիգադի հրամանատար, գնդապետ Բագրատ Միտոյանի, հրետանային գնդի հրամանատար, մայոր Միքայել Գալստյանի և բազմաթիվ այլ հայորդիների կատարած սխրանքները:

Երրորդ գլխի երրորդ բաժնում հատուկ ուշադրություն է դարձվում ռազմա-ծովային նավատորմի և երկաթուղային զորքերի շարքերում մարտնչած հայորդիների գործունեության վերհանմանը: Այստեղ խոսվում է Հյուսիս-խաղաղօվկիանոսյան ռազմական նավատորմի շտաբի պետ, առաջին կարգի կապիտան (հետագայում փոխծովակալ) Վալերիան Սուրաբեկովի, Հեռավորարևելյան ուղղության երկաթուղային հատուկ օկրուգի պետի տեղակալ, երկաթուղային զորքերի գեներալ-մայոր Արամ Աղաբեկյանի, ավիաէսկադրիլիայի հրամանատար, գվարդիայի ավագ լեյտենանտ Վիկտոր Աղաբաբյանի և այլոց սխրանքների մասին:

Չորրորդ գլխում Լուսինե Կոստանդյանը լուսաբանում է Առաջին հեռավորարևելյան ռազմաճակատի կազմում մարտնչած հայորդիների սխրանքները, բացահայտում դիվիզիայի հրամանատար, Խորհրդային Միության հերոս, գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանի, հեծյալ դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Տիմոֆեյ Քեդեօղյանի, գվարդի-

---

[1] Նշված աշխ., էջ 17:

այի գնդապետներ Ռաֆայել Հայրապետովի և Սամվել Հարությունյանի, Մերձծովյան բանակի հակաօդային պաշտպանության զորքերի շտաբի պետ, հրետանու գեներալ-մայոր Գևորգ Չայլախյանի մարտավարական ունակությունները և դերը հաղթանակի գործում: Գլխի երրորդ բաժնում հայ պատմագրության մեջ առաջին անգամ լուսաբանվում են հիմնականում հայուհիներով համալրված 352-րդ զենիթային-հրետանային գնդի մարտական գործողությունները: Այդ գունդը 36-րդ հակաօդային պաշտպանության դիվիզիայի կազմում սկզբից մինչև վերջ մասնակցել է Խորհրդա-ճապոնական պատերազմին և իր արժանի ավանդը ներդրել տարած հաղթանակում: Գնդի շարքերում կային 435 հայուհիներ, որոնք բոլորն էլ պարգևատրվեցին «Ճապոնիայի դեմ տարած հաղթանակի համար» մեդալով: Պարգևատրվածների թվում էին՝ զենիթային հրանոթների անձնակազմի անդամներ, եֆրեյտորներ Օֆիկ Լորյանը, Ծովիկ Կալամքարյանը, Սեդա Ղազարյանը, Վարսիկ Բաբայանը (Վանաձորից), Ասյա Ղազարյանը, Հայաստան Հարությունյանը, Վերգուշ Մուղդուսյանը (Գյումրիից), Անյա Քարաջյանը, Գալյա Օլոյանը (Ստեփանավանից), Թամարա Սանթրոսյանը, Անյա Սարգսյանը (Դիլիջանից), Սոնյա Խանումյանը (Իջևանից) և շատ ուրիշներ[1]: Վերջում հավելենք նաև, որ Լուսինե Կոստանդյանը հիմնահարցի վերաբերյալ 4 հոդված է հրապարակել տարբեր հանդեսներում:

2006 թ. Երևանի «Գասպրինտ» տպարանում հրատարակվեց պահեստի գնդապետ Վլադիմիր Նավասարդյանի «Մեծ Խինգանից մինչև Պորտ Արթուր» մենագրությունը, որը նվիրված էր Հեռավոր արևելքում ճապոնական Կվանտունյան բանակի ջախջախման մարտերին մասնակցած հայ մարտիկների սխրագործություններին:

Գրքի ծավալը 161 էջ է: Այն բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից ու եզրափակումից: Առաջին գլխում լուսաբանվել է Անդրբայկալյան ռազաճակատի կազմում հայ ռազմիկների մասնակցության հիմնահարցը, երկրորդ գլխում ՝ Առաջին հեռավորարևելյան ռազմաճակատի կազմում Խարբին-Գիրինյան ուղղությամբ հայերի մասնակցության հիմնահարցը, երրորդ գլխում՝ Երկրորդ հեռավորարևելյան ռազմաճակատի կազմում հայերի մասնակցության հիմնահարցը: Չորրորդ գլխում հեղինակը լուսաբանել է Խաղաղօվկիանոսյան նավատորմի կազմում

[1] Նշված աշխ., էջ 21:

հայ ծովայինների կատարած սխրանքները: Չնայած հեղինակը օգտագործված գրականության ցանկի վերջում նշում է, որ աշխատությունը կազմված է ԽՍՀՄ պաշտպանության նախարարության Պոդոլսկի (Մոսկվայի մարզ) և Գատչինայի (Լենինգրադի մարզ) արխիվներից, այնուամենայնիվ ոչ մի էջում չկան հղումներ այդ արխիվներին: Չկենտրոնանալով մարտական գործողությունների ընթացքի և նրանց հաղթական ելքի վրա հայ ռազմիկների ներդրած ավանդի մասին հեղինակի մեջբերած հետաքրքիր տեղեկությունների վրա՝ նշենք, որ դրանց հետ մեկտեղ Վլադիմիր Նավասարդյանը շտկումներ է կատարում Արմո Մալխասյանի և Արամայիս Մնացականյանի աշխատություններում նկատված տեղանունների և անձնանունների սխալների, որոշ զինվորական գործիչների կոչումների ու պաշտոնների մասին աղավաղված տեղեկությունների վերաբերյալ[1]: Սակայն ինքն էլ սխալվում է նման հարցերում, երբ ավիացիայի մարշալ Խանփերյանցի ազգանունը սխալմամբ նշում է՝ Խանֆերյանց[2]:

Ամբողջովին նորություն է գլխի չորրորդ գլուխը, որտեղ խոսվում է Խաղաղօվկիանոսյան նավատորմի մարտական գործողություններին հայ ծովայինների մասնակցության մասին: Այստեղ լուսաբանված են 3-րդ կարգի կապիտան Պավել Ղարիբյանի, ռազմանավի հրամանատար Ստեփանյանի (անունը և կոչումը չեն նշվում), «Լ-19» սուզանավի առաջին մարտական բաժանմունքի հրամանատար, ավագ-լեյտենանտ Նիկիտա Ավետովի (զոհվել է մարտում), «Բ-4-Պ» նավի հրամանատար, լեյտենանտ Սերոբ Մկրտչի Զաքարյանի և շատ ուրիշների սխրանքները:

Գրքի վերջում օգտագործված գրականության ցանկում բերված են 40-ից ավելի գրքերի և նրանց հեղինակների անուններ, սակայն ինչպես նշեցինք, տողատակերում տրվող անհրաժեշտ գիտական ապարտը բացակայում է:

2010 թ. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը հրատարակեց «Հայոց պատմություն», հ. 4, գիրք առաջին, նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.) կոլեկտիվ աշխատությունը, որի 9-րդ գլխի «զ» բաժինը նվիրված է Խորհրդա-ճապոնական պատերազմին հայերի մասնակցությանը

---

[1] **Վ. Մ. Նավասարդյան**, Մեծ Խինգանից մինչև Պորտ - Արթուր, Եր., Գասպրինտ, 2006, էջ 19-25:

[2] Նույն տեղում, էջ 26:

(էջ 573-578): Բաժնի հեղինակն է պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանը, որն այսօր Հայաստանում Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմներին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցը հետազոտող միակ պատմաբանն է: Չնայած հատորում քննվող թեմային հատկացված ծավալի սահմանափակությանը՝ հեղինակին հաջողվել է գիտականորեն ամբողջացնել ինչպես Խորհրդա-ճապոնական պատերազմի համառոտ ընթացքը, այնպես էլ Հեռավոր արևելքում տեղի ունեցած մարտական գործողություններին մասնակից հայ զորավարների, սպաների և զինվորների ներդրած ավանդը: Ռուսաստանի Դաշնության կենտրոնական արխիվի տվյալների հիման վրա հեղինակը նշել է, որ Խորհրդա-ճապոնական պատերազմում 12-րդ օդային բանակի հրամանատար, ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակով-Արմենակ Խանփերյանցը Խինգան-Մուկդենյան մարտական գործողության ժամանակ լայնորեն կիրառեց մոտոհրաձգային զորամասերի՝ հակառակորդի օդանավակայաններում ինքնաթիռներով դեսանտ իջեցնելու մարտավարությունը: Դրանով իսկ 12-րդ օդային բանակը առաջին անգամ պատերազմի պատմության ընթացքում կիրառեց հարձակման ժամանակ առաջապահ ջոկատների յուրահատուկ պարտականություններ, որը նորություն էր խորհրդային ավիացիայի մարտական գործողությունների մեջ. մտահղացման հեղինակներից էր ավիացիայի մարշալ Ա. Խանփերյանցը: Խինգան-Մուկդենյան մարտական գործողության ընթացքում 12-րդ օդային բանակի զորամիավորումների գործողությունները հմտորեն ղեկավարելու և օպերատիվ-ռազմավարական բարձր ունակություններ դրսևորելու համար ավիացիայի մարշալ Ա. Խանփերյանցը պարգևատրվեց Սուվորովի 1-ին աստիճանի զորավարական շքանշանով, չնայած նա ներկայացվել էր Խորհրդային Միության հերոսի կոչման: Ըստ Կ. Ա. Հարությունյանի՝ 12-րդ օդային բանակի շարքերում ծառայում էին ավելի քան 200 հայորդիներ[1]: Նույնքան հայեր էին ծառայում Անդրբայկալյան ռազմաճակատի առաջապահում գործող 6-րդ գվարդիական տանկային բանակի շարքերում: Այդ բանակը, հաջողությամբ հաղթահարելով Մեծ Խինգանի լեռնաշղթան, դուրս եկավ Կենտրոնական-Մանջուրական հարթավայր և մեկը մյուսի հետևից ազատագ-

[1] Հայոց պատմություն, հ. 4, գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), «Զանգակ» հրատ., 2010, էջ 574:

ռելով չինական Չանչուն և Մուկդեն քաղաքները՝ օգոստոսի 21-ին մտավ Դալնի (Դայրեն), իսկ 22-ին Պորտ Արթուր (Լյույշուն) ռազմավարական խիստ կարևոր նշանակություն ունեցող նավահանգիստ քաղաքները: Բանակի ռազմական խորհրդի անդամ, տանկային զորքերի գեներալ-լեյտենանտ Հայկ Թումանյանը կլիմայական և բնական դժվարին պայմաններում տանկային զորամասերի գործողությունները հմտորեն ղեկավարելու համար պարգևատրվեց Լենինի շքանշանով: Ալեքսանդր Նևսկու շքանշանով պարգևատրվեցին 208-րդ ինքնագնաց հրետանային գնդի շտաբի պետ, մայոր Սերգեյ Մկրտչյանը, մեքենայացված գումարտակների հրամանատարներ, գվարդիայի մայորներ Զավեն Բաղդասարյանը, Ներսես Հակոբյանը, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով՝ 64-րդ մեքենայացված բրիգադի հրետանու պետ, փոխգնդապետ Աշոտ Օհանյանը, գվարդիայի մայորներ Մամիկոն Առուստամովը և Ալեքսանդր Մելքոնյանը, 46-րդ գվարդիական տանկային բանակի ինժեներ կապիտան Հրաչյա Աղեկյանը և շատ ուրիշներ[1]:

Կ. Ա. Հարությունյանը բարձր է գնահատում Մանջուրիայի տարածքում ճապոնական Կվանտունյան միլիոնանոց բանակի ջախջախման և Հարավային Սախալինի ազատագրման գործում նշանակալի դեր կատարած 2-րդ հեռավորարևելյան ռազմաճակատի հրետանու հրամանատար, Խորհրդային Միության հերոս, հրետանու գեներալ-լեյտենանտ (1958 թ.՝ գեներալ-գնդապետ) Միքայել Արտեմի Պարսեղովի գործողությունները: Հրետանու հզոր կրակը ավերում էր հակառակորդի պաշտպանական ամրությունները, ստիպում ճապոնացիներին նահանջել կամ հանձնվել: Հայ զորավարը պարգևատրվեց Սուվորովի 2-րդ աստիճանի շքանշանով: Կ. Ա. Հարությունյանը համառոտակի լուսաբանել է նաև Երկրորդ հեռավորարևելյան ռազմաճակատի 65-րդ հրետանային գնդի հրամանատար, մայոր Միքայել Գալստյանի, 5-րդ հրաձգային կորպուսի հրետանու հրամանատար, գնդապետ Գրիգոր Ասատուրովի, 213-րդ բանակային հրանոթային-հրետանային բրիգադի հրամանատար, գնդապետ Սամվել Հարությունյանի, 39-րդ հրաձգային դիվիզիայի հրետանու հրամանատար, փոխգնդապետ (1956 թ. գեներալ-մայոր) Գաբրիել Կամոևի, 284-րդ հրաձգային դիվիզիայի հրետանու հրամանատար,

---

[1] Նույն տեղում, էջ 575:

փոխգնդապետ Գևորգ Ապրեսյանի կատարած սխրանքները, որոնք արժանացան Կարմիր դրոշի շքանշանի և այլն[1]:

Այնուհետև Կ. Ա. Հարությունյանն անդրադառնում է Առաջին հեռավորարևելյան ռազմաճակատի կազմում իրենց զորավարական տաղանդով աչքի ընկած դիվիզիայի հրամանատարներ, Խորհրդային Միության հերոս, գեներալ-մայորներ Անդրանիկ Ղազարյանի, Տիմոֆեյ Քեդեօղյանի, գնդապետ (1974 թ. գեներալ-մայոր) Առաքել Օգանեզովի, գնդապետ (1949 թ. գեներալ-մայոր) Կոնստանտին Լազարևի, 10-րդ օդային բանակի հրամանատարի տեղակալ, ավիացիայի գեներալ-մայոր Գրիգոր Տոլմաջյանի, ռազմաճակատի սանիտարական վարչության պետ, բժշկական ծառայության գեներալ-լեյտենանտ (1976 թ. Սոցիալիստական աշխատանքի հերոս) Ավետիք Բուռնազյանի և բազմաթիվ այլ հայորդիների կատարած սխրանքներին, մեկ առ մեկ բացահայտում նրանց գլխավորած զորամիավորումների ունեցած դերը Խորհրդա-ճապոնական պատերազմում տարած հաղթանակի գործում: Պատմական գիտությունների դոկտոր Կ. Ա. Հարությունյանը Խորհրդա-ճապոնական պատերազմին հայ ժողովրդի զավակների մասնակցության հիմնահարցին համառոտակի անդրադարձել է նաև 2012 թ. Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի կողմից հրատարակված «Հայոց պատմություն» բուհերի համար դասագրքի երրորդ բաժնի երկրորդ գլխի «Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.)» ենթաբաժնում (էջ 650-673), ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 2016թ. հրատարակած «Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945. թթ)» մենագրության 182-191 էջերում և այլն: Կ. Ա. Հարությունյանի աշխատություններն աչքի են ընկնում աղբյուրագիտական, արխիվային հարուստ տվյալներով և գիտական արժեքավոր ապարատով:

Այսպիսով, ամփոփելով Խորհրդա-ճապոնական պատերազմին հայ ժողովրդի զավակների մասնակցության հիմնահարցի լուսաբանումը հայ պատմագրության մեջ՝ գալիս ենք այն եզրահանգման, որ հայ պատմաբանները հատկապես անկախության շրջանում, շնորհակալ գործ են կատարել այդ ասպարեզում և ստեղծել գիտական արժեքավոր աշխատություններ, որոնք լրացնում են Հայոց պատմության սպիտակ էջերը: Սա-

[1] Նույն տեղում, էջ 574-576:

կայն այդ ամենը դեռ սկիզբն է և դրանով չի ավարտվում հիմնահարցի սպառիչ ուսումնասիրությունը: Մեր կարծիքով, հայ պատմաբանները դեռևս անելիքներ ունեն հատկապես ամփոփիչ, ծավալուն մենագրություն ստեղծելու հարցում, որտեղ կպարզվեն այդ պատերազմին մասնակցած և զոհված հայ ռազմիկների ընդհանուր թիվն ու անունները, բոլոր պարգևատրվածների անունները: Այդ աշխատությունը ցանկալի կլինի հրատարակել հայերեն և ռուսերեն լեզուներով:

ԽՈՐՀՐԴԱ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԵՐԱԶՄԻՆ ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վոլոդյա Գասպարյան

Բանալի բառեր *- պատերազմ, պատմություն, բանակ, խորհրդա-ճապոնական, պատմագրություն, հայ, պայմանագիր, կոնֆերանս, մարտական գործողություններ*

Խորհրդա-ճապոնական պատերազմը տեղի է ունեցել 1945 թ. օգոստոսի 9-ից սեպտեմբերի 2-ը և հանդիսանում է Երկրորդ համաշխարհային պատերազմի եզրափակիչ փուլը: Եթե խորհրդային տարիներին հայ պատմաբանները հատուկ ուսումնասիրություններ չէին կատարել այդ ասպարեզում և բավարարվել էին իրենց աշխատություններում բառացի մի քանի տող տալ հիմնահարցին, ապա անկախացումից հետո նրանք հնարավորություն ստացան առանձին գիտական գործեր (ատենախոսություն, մենագրություն, Հայոց պատմության վերաբերյալ գրքերի ու դասագրքերի ենթաբաժիններ) ստեղծել այդ ուղղությամբ: Հայ պատմագրությունը դրվատանքով է անդրադարձել այդ պատերազմի ակտիվ մասնակից հայորդի զորապետեր՝ 12-րդ օդային բանակի հրամանատար, ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակով-Արմենակ Խանփերյանցի, Երկրորդ Հեռավոր-արևելյան ռազմաճակատի հրետանու հրամանատար, Խորհրդային Միության հերոս, գեներալ-լեյտենանտ (հետագայում՝ գեներալ-գնդապետ) Միքայել Պարսեղովի, դիվիզիաների հրամանատարներ, գեներալ-մայորներ Անդրանիկ Ղազարյանի, Առաքել Օգանեզովի, Կոնստանտին Լազարևի, Տիմոֆեյ Դեդեօղլանի, 6-րդ տանկային բանակի ռազմական խորհրդի անդամ գեներալ-լեյտենանտ Հայկ Թումանյանի, բրիգադի հրամանատարներ, գնդապետներ՝ Սամվել Հարությունյանի, Ռաֆայել Հայրապետովի, Բագրատ Միտոյանի, 352-րդ զենիթային-հրետանային գնդի կազմում մարտնչած 435 հայուհիների և այլոց կատարած սխրանքը, բացահայտել հայերի ավանդը այդ պատերազմում

տարած հաղթանակում: Չնայած հայ պատմաբանների կատարած շնորահակալ գործին, դեռ շատ անելիքներ կան այդ հիմնահարցի ուսումնասիրության ասպարեզում: Հարկավոր է շարունակել այդ աշխատանքը, հայերեն և ռուսերեն լեզուներով ստեղծել ամփոփիչ, ծավալուն առանձին մենագրություն, որտեղ պետք է անպայման տրվեն պատերազմին մասնակից հայերի թիվը, զոհվածների անունները, պարգևատրվածների քանակը:

АСПЕКТЫ ОСВЕЩЕНИЯ УЧАСТИЯ АРМЯН В СОВЕТСКО-ЯПОНСКОЙ ВОЙНЕ В АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ.

Володя Гаспарян

Ключевые слова *- война, история, армия, советско-японский, историография, армянин, договор, конференс, военные действия*

Советско-японская война (9 августа-2 сентября 1945 г.), является заключительным этапом Второй мировой войны. Если в советский период армянские историки не проводили специальных исследований в этой области и в своих работах довольствовались буквально несколькими строками об этом вопросе, то после обретения независимости у них появилась возможность создания отдельных научных работ (диссертации, монографии, разделы Армянской истории в книгах и учебниках) на эту тему. Армянская историография с благодарностью обратилась к подвигам совершенным армянами-военачальниками, активными участниками этой войны: командиром 12-й воздушной дивизии маршалом авиации Сергеем Худяковым-Арменаком Ханперянцем, командиром артиллерии Второго Дальневосточного фронта, Героем Советского Союза генерал-лейтенантом (в дальнейшем генерал - полковником) Микаэлом Парсеговым, командирами дивизий генерал-майорами Андраником Казаряном, Аракелом Оганезовым, Константином Лазаревым, Тимофеем Дедеогяном, членом военного совета 6-й танковой армии генерал-лейтенантом Гайком Туманяном, бригадными командирами полковниками Самвелом Арутюняном, Рафаелом Айрапетовым, Багратом Митояном, 435 армянскими женщинами-солдатами, воевавшими в составе 352-го зенитно-артиллерийского полка, раскрыли вклад армян в дело победы в этой войне. Велик проделанный армянскими историками труд, но есть еще много работы в области изучения этого вопроса. Необходимо продолжить эту работу, создать отдельную объемную, обобщающую монографию на армянском и русском языках, где непременно будут освещены число, имена погибших, количество награжденных армян-участников этой войны.

THE COVERAGE OF ARMENIANS' PARTICIPATION IN SOVIET–JAPANESE WAR IN ARMENIANHISTORIOGRAPHY

Volodya Gasparyan

Keywords: *war, history, army, soviet-japanese, historiography, armenian, agreement, conferance, hostilities*

The Soviet-Japanese War took place within the period of August 9to September 2, 1945 and is considered as thetermination phase of the Second World War. If during the Soviet years the Armenian historians did not conduct any specific research in that field and were satisfiedwith making reference to only a few issues in their works, after the Independence they were able to create separate scientific works in that regard (thesis, monographs, books and separate section about Armenian history).

The Armenian historiography praised the heroism of the active Armenian participants military commanders Sergei Khudyakov-Armenak, commander of the 12th Air Army, Mikayel Parseghov, the Commander of the Second Far Eastern Front Artillery,Hero of the Soviet Union, Lieutenant general (later Lieutenant colonel), Division commanders, Major generals Andranik Ghazaryan, Arakel Oganesov, Konstantin Lazarev, Timofey Dadeoghyan, Military Council member of the 6th Tank Army, Lieutenant General Hayk Tumanyan, Brigade commanders, colonelsSamvel Harutyunyan, Rafael Hayrapetov,Bagrat Mitoyan,Colonels, 435 Armenian women who fought in the 352th antiaircraft-artillery regiment and other Armeniansin the War, discovered their contribution to the Victory process of the War.

Despite the grateful work of Armenian historians, there is a lot of work to fulfil in regard to study of that issue. That work needs to be continued, an extensive monography inArmenian and Russian languages should be elaborated, where the number of Armenian participants, names of the victims as well as the number of awardees of the Warshould be mentioned.